'ի տունն ծնանելոյ կնոջ, և պատրաստ ընդ կենալ մինչև կինն ծնցի, եթէ գուցէ ծնեալն տկար և այլ որ ոք պատճառի որ տա տեղի կասկածանաց պահելոյ նմայ մինչև ժամանակ սահմանի եկեղեցւոյ այսինքն, եօթն աւուր, և ապա մկրտիլ, իսկոյն մկրտեսցի դրօշմեսցի վերջին Օծումն տացի և հաղորդեսցի երեխայն, յառաջ քան զվնաս ինչ 'ի վերայ կենաց երեխային յանձն առնուլն, այլ եթէ երեխայն առողջ թոյլ տացէ նմայ մկրտիլ, յաւուրն սահմանի։

ԳԼՈՒԽ ՅԱՋ.

Մի՛ ոք առանց հրաւիրելոյ մի՛ մտցէ 'ի տուն ո՛չ ծնեալ մանկանց և ո՛չ ամուսնացեալ արանց և կանաց վասն շնորհաւորելոյ ծնունդ նորայ մանկան և հարսանիսն ամուսնացելոյ, և ամենայն ընտանի և Տեառն տան որում գտցի ծընունդ և ամուսնութիւն, հարկաւոր է հրաւիրել նոցայ որում ինքեանք սիրեն և ցանկան տեսանել ընդ խրախճանութիւնս իւրեանց, հրաւիրումն հարկաւոր է լինիլ, այսպէս որ 'ի յերեսս միոյ թղթոյ շարեսցի, այսինքն։

Եղիսաբեթ տիկին ամուսին պարոն Մաղաքիայի դեկտեմբերի ամսի 14 պատկեր աւուրն երեքշաբաթի առաւօտեան 6 ժամին ծնաւ մանուկ մի արու սպասաւոր ձեր և մխիթարութիւն